

թեան չեն հասած: Բայ սատի աննպատակ պիտի չըլլար ստորեւ տալ փոքրիկ ակնարկ մը նաեւ մեր դրացիներու մարդաբանական աղբիւրներու վրայ, որոնց մարդաբանութիւնը աւելի քան մէկ տեսակէտով սերտ կապուած է հայ ժողովուրդի մարդաբանութեան հետ, ինչպէս որ ստէպ մեր ճակատագիրը անոնց ալ բախտն եղած է պատմութեան մէջ¹⁶:

¹⁶ Կովկասի մարդաբանութեան համար անգնահատելի արդիւնք չհասած է անտարակոյս Ալ. Չաւախիշվիլի, որուն գործքերէն մին արդէն վերջ յիշեցնէր. վրացի մարդաբանը յատկապէս ուսումնասիրած է իւր հայրենակիցներու մարդաբանութիւնը եւ սրակ սրակ հրատարակած է Մոսկուայի ուսմարդաբանութեան թերթին մէջ (բոլորն ալ ուսուերէն լեզուով). յիշեցնէր Վրաստանի մարդաբանութեան համար. Գարթի վրացիներ. Journal russe d'anthropologie, 1905, Թ. 3-4: Վրաստանի մարդաբանութիւն, Կախէթի վրացիներ, անդ, 1907, Թ. 3-4: Վրաստանի մարդաբանութիւն, Գուրիայի վրացիներ, անդ, 1912, Թ. 2-3: Եւրոպ. տարիներ կը գրէ այն տեղ Միւրգելից վրացիներու մասին, Թ. 1-2: յետոյ՝ երկայնագլխութիւնը վրաց քով, անդ, 1912, Թ. 3-4: Կաւկասի Հրեաները, անդ, 1912, Թ. 4 եւն: Աւելի ընդարձակ ծրագրով դրողած է A d o l f D i r r, Anthropologische und ethnologische Übersicht über die Völker des Kaukasus, Petermanns Mittheilung, XVII, 1913, S. 135; Die gegenwärtige Bevölkerung des Kaukasus. Vergleichende anthropologische Untersuchung, 1917; Anthropologischer Bestand der gegenwärtigen Bevölkerung des Kaukasus, Medizin. Mitt. Georgiens, 1923, Nr. 3-5; Die kaukasische Rasse, Mittheilung der Georgischen Staatsuniversität, Tiflis 1923, Nr. 3. P., Zur Anthropologie der Georgier in Kartalinien und Kachetien, Globus (S. A.), p. 335-337. St. Somnier, Note volante sui Karacai ed alcune misure di Abasá, Khabardini e Abasekh, Arch. per l'Ant. Etn., XXXI, 1901, p. 413-457. v. Erckert, Kopfmessungen kaukasischer Völker, Archiv für Anthr., XVIII, p. 263-284, 297-335, XIX, p. 55-84, 211-249, 330-356. A. Arutinoff, Այսորիներու մարդաբանութիւնը, Journal russe d'anthrop., 1902, Nr. 4, Ուտերը, անդ, 1905, Թ. 1-2. N. W. Giltschenko, Materialien zur Anthropologie des Kaukasus, St. Petersburg 1890, S. 217 (ընդգրկը ուսուերէն), բովանդակութիւնը տուած L. Stieda, Die Osseten, Ի թերթին Biologisches Zentralblatt, Bd. XI, 1891, Nr. 9-10. S. Weissenberg, Die kaukasischen Juden in anthropologischer Beziehung, Arch. für Anthr., Bd. VIII, 1909, Heft 4. E. Metschnikoff, Über die Beschaffenheit des Augenlides bei den Mongolen und den Kaukasiern, Zeitschrift für Ethnologie, 1874, 6. Bd., S. 153. J. Pohl, Die Querschnittform des Kopfhaares der Kaukasier, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, 1897, S. 483. Smirnow, Sur la couleur des cheveux et des yeux de divers peuples du Caucase, Bulletin de la société d'anthrop. de Paris, 1907. Նոյնպէս Գ. Գուրտովի ուսումնասիրութիւնները Լեզերու, Թաթարներու եւն մասին ուսմ մարդաբանութեան թերթին մէջ, եւ որբէններ, զորոնք զանց կ'անենք յիշել:

(Շարունակելի:) Գ. Է.

Թ Ո Ւ Ն Ի Կ Ե Ը Ն Ք Ի Ս Ը Ս Ո Ւ Ն

1. Կոստանդին Միրանաձին կայսր¹ խօսելով Տարօնի վրայ, կը գրէ թէ Գրիգորիկ, Տարօնի տէրը, կ'ենթարկէ ինքզինքը Լեւոն Զ. կայսեր (886—911): Ի սկզբան երկերես դեր կը խաղար. մէկ կողմէն կ'երեւցնէր ինքզինքը Յունաց բարեկամ, միւս կողմէն կը գործէր կայսեր հպտտակ թեմերու դէմ՝ առաջնորդ ծառայելով ասորական զօրքերուն: Քիչ յառաջ ձերբակալած էր ասիկա պատերազմի ժամանակ Արքայիկի որդիները, որոնք Աշոտ պրոտոսպարի հօր՝ Գրիգորիկի եղբորորդիներն էին: Սմբատ, որ նոյն ատեն իշխանաց իշխանն էր, անոնց ազատութեան համար դիմած էր կայսեր, որպէս զի միջնորդէ Գրիգորիկի քով: Կայսրը շատ անգամ հրաւիրած էր զինքը, որ Կ. Պոլիս դայ. ի վերջոյ զիջանելով Կոստանդինի, Լիբոսի որդւոյն խնդրանքին զայցած է մայրաքաղաք, ուր կը տրուի իրեն մաղխատրոս տխուղան էւ կ'անուանուի Տարօնի զօրավար (στρατηγός): Ասկէ ետքը երկրորդ անգամ մ'ալ կ'այցելէ Գրիգորիկ Կ. Պոլիս:

Գրիգորիկի որդին էր Բագարատ. իսկ Աշոտ անոր խորթ որդին կը նկատուէր: Հօրը մեռնելէն ետքը Բագարատ Կ. Պոլիս կու գայ, եւ կ'ընդունի պատրիկ եւ զօրավար Տարօնի տիրապետները. եւ Թէոփիլակոսոս մաղխատրոսի քրոջ հետ կ'ամուսնանայ:

Կ. Պոլիս կու գայ նաեւ Աշոտ՝ ընկերակցութեամբ Լիբոսի որդւոյն Կոստանդինի կայսրը կը պատուէ զինքը Պրոտոսպար տիրապետով եւ կ'ուզարկէ Տարօն: Աշոտ երկրորդ անգամ կ'այցելէ Կ. Պոլիս Ռոմանոս կայսեր օրով եւ կը ստանայ պատրիկութիւն:

Երբ Ապուղամբի (Απογαμε) որդւոյն՝ Թոռնիկի մահէն ետքը կայսրը Կրենիտէսի ձեռքով յարքունիս կը գրաւէ Ապուղամբի հողերը, համաձայն Թոռնիկի կտակին, Գրիգորիկի որդիք Բագարատ եւ Աշոտ կ'առաջարկեն Կայսեր՝ Ապուղամբի հողերն իրենց ձգել եւ վտարելն ստանալ Ողնուտն (Ὀβλυστοχον): Այս առաջարկին կը հաւանի Կայսր եւ կը տիրանայ Ողնուտին: Այս պարագային ծանօթ է նաեւ Ասողիկ (183). «Ի ՆՓՆ (966) թուականին... վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին»: Այս Աշոտը կը յիշեն նաեւ արարացի պատմագիրք.

¹ De administr. imp. 43, էջ 182—189:

«Աշոտ որդի Գրիգորի իշխանաց իշխան եւ տէր Սասնոյ» յորջորջելով²:

Աշոտի որդիներէն կը յիշուին Գրիգոր եւ Բագարատ, որոնք 977ին Վարդ Սկիւրոսի բանակին մէջ կը ծառայէին. Ասողիկ (191) կը գրէ. «Վարդայ զինեալ ընդդէմ նորա (Վասիլ կայսեր) ի պատերազմ. յորում քաջապէս մարտուցեալ զօրն Հայոց, որպէս որդիք իշխանին Տարօնոյ՝ Գրիգոր եւ Բագարատ եւ Չափրանիկ իշխան Մոկացի, ահաբեկ արարեալ զգօրան Յունաց»: Եւ դարձեալ. 991ին Վասիլ կայսր «երթեալ պաշարէ զքաղաքն Վէսայ եւ առնու զնա եւ զմախտրոսն զԳրիգոր զորդի իշխանին Տարօնոյ զօրքն թողու անդէն ընդդէմ Բուլղարին»: Բուլղարները սահայն կը փորձեն յանկարծական յարձակմամբ մը յետս մղել Գրիգորի զօրքը. «որոց ընդդէմ եկեալ որդին Գրիգորոյ՝ պատանեակն Աշոտ, զոր ձերբակալ առնէին: Եւ ապա հօրն զկեանս ի վերայ եղեալ պատերազմաւ, մինչ ի նմին մեռանել ամենայն զօրքն³»:

Աշոտ, որ գերի ինկած էր Բուլղարացւոց ձեռքը, ազատ կ'արձակուի եւ կը փեսայանայ Բուլղարներու Սամուէլ ցարին: Եւ երբ ցարը կը յանձնէ իրեն Դիւռաքիոնի պահպանութիւնը՝ զաղտազողի կը զիմէ փախուտի, իսկ քաղաքը կը մատնէ Կայսեր: Իրբեւ վարձատրութիւն՝ զինքը մաղխատրոս կ'անուանէ Կայսրը⁴:

2. Ապուղամբ, Գրիգորիկի եղբայրը, որ Արքայիկի որդւոց հետ Կայսեր ներկայացած, պրոտոսպարի անուանուած եւ միւսանգամ հայրենիք ուղարկուած էր, վերստին Կ. Պոլիս կու գայ, պատրիկութեամբ կը պատուի եւ կ'ամուսնանայ Լիբոսի որդւոյն՝ Կոստանդինի աղջկան հետ: Երկիր զառնալէն քիչ յետոյ կը վախճանի: Իր միակ ժառանգն էր Թոռնիկ. սա իր հօրեղբոր Գրիգորիկի մահէն ետքը Կ. Պոլիս կայսեր կը ներկայանայ եւ պատրիկութեան կը բարձրանայ: Իր հօրեղբոր որդիներէն՝ Բագարատէն եւ Աշոտէն շատ նեղութիւններ կը կրէ. կը վախճանի կտակելով իւր հողերը Կայսեր: Իր կիսն եւ փոքրիկ զաւակը Կրենիտէս կը փոխադրէ Կ. Պոլիս:

Այսպէս Կոստանդին Միրանաձին:

3. Յ. Մարկուարտ Գրիգորիկն ու Ապուղամբը կը սերեցնէ Բագարատ Բագարատուն-

² Marquart, Südarmanien. 460 եւ 498:
³ Ասողիկ, 260—261: Հմմտ. եւ Կեղերեսոս: Բ., 447—449:
⁴ Կեղերեսոս, Բ., 449—451: Հմմտ. Marquart, անդ, 498—499:

ւոյ Տարօնի տիրոջ (Սողոմոն) որդիէն: Բայց պատմութենէն յայտնի չէ թէ Սողոմոն Բագարատունի (Թ. Արժր. 204) Բագարատի որդին ըլլայ եւ ոչ ալ թէ Գրիգորիկ եւ Ապուղամբ Սողոմոնի որդիքն են:

Այն պարագան որ Կրենիտէս Մամիկոնեան տէրն կ'ըլլայ Գրիգորիկի եւ Ապուղամբի թոռնիկներուն, եւ դարձեալ այն հանգամանքն որ Գրիգորիկի խորթ որդին Աշոտ Սասնոյ տէր կը ներկայանայ, իսկ Գրիգոր Մաղխատրոս Սասնոյ տէրը Մամիկոնեան կը ձանձնայ, կրնանք ասկէ հետեւցնել, թէ ասոնք՝ Գրիգորիկ եւ Ապուղամբ Մամիկոնեան եղած ըլլան եւ Տարօնի մէկ մասին տէրը, յանուանէ ծանօթ է թէ Ողնուտն Գրիգորիկի ձեռքն էր:

Այս նկատումով աւելի հաւանական կը թուի ինձ Գրիգորիկն նոյնացնել Վասակայ որդւոյն Գրիգորի հետ, զոր կը յիշէ Թովմաս Արժրունի (221), որուն համար կը գրէ պատմիչը, թէ «սա նմանապէս ողեղուարձ լիաստութեամբ աուլցեալ՝ հոյակապ եւ անուանի ի մէջ Հայկականացս եւ ցանկալի լսողաց եւ ուրախարար տեսողաց. սա առաւելաց յամենայն հոգածութիւնս ի զիւսոս իմաստութեան ուսումնասիրութեան եւ այլն ամենայնի՝ քան զհարս եւ զհաւս իւր»: Այլուր (278) խօսելով միւսանգամ իր մասին կը գրէ Թովմաս, թէ «ի սոյն աւուրս (905) զնոյն օրինակ ապստամբութեան բերեալ եւ Գրիգորի որդւոյ Վասակայ, որոյ Ապուղամբայն անուն ձանաչիւր, որ բռնեալ որջացեալ էր յիւրեան անուանեալ ամրոցի»: Անոր մէկ զուտորը կնութեան առած էր Գագիկ, այս պատճառաւ ալ Արուճ ամրոցը կը կործանէ միայն, իսկ «զժառանգութիւն իւրեանց գաւառին հաստատէ նոցա... բնակեալ (անդէն) աներկիւղ» (Արժր. 279): Այլուտս ծանօթ է թէ Արուճ Մամիկոնեանց կալուածքն էր (Ղեւոնդ, 15):

4. Ապուղամբի որդւոյն Թոռնիկ յորջորջումը կը հրաւիրէ իր վրայ ուշադրութիւն: Արդեօք իր մէջը պէտք չէ՞ փնտռել կապը Տայոց եւ Սասնոյ Թոռնիկեանց: Դժբախտաբար պատմութիւնը չէ պահած Թոռնիկի անհափազանս որդւոյն անունը, զոր Կրենիտէս Մամիկոնեան տարած էր Կ. Պոլիս. անծանօթ կը մնայ մեզի նաեւ անոր բախտը: Սասուն կը գտնուի այժմ Կայսեր զրօշին տակ:

Ժ. դարու երկրորդ կէտին Սասնոյ տէր կը ներկայանայ՝

ՄՈՒՇԵՂ

Մատթէոս Ուռայեցի (130) խօսելով Մասնոյ տիրոջ վրայ, կ'անուանէ զանիկա «Իշխանն Հայոց զօրաւորն եւ քաջ որդին Մուշեղայ Թոռնիկ»: Այս Մուշեղի հայրանունը չէ յիշուած: Ալիշան⁵ եւ Մարկուարտ⁶ Մուշեղի հայրը կ'ենթադրեն այն Չորտուանէլը, որ նիգակակիցն եղած է 1021ին Վասակ պահաւորուելոյ: Աւելի հաւանական պիտի ըլլար աչքի առաջ ունենալ Չորտուանէլ Ա., զոր կը յիշէր Կոստանդին Ծիրանածին: Ինձի կ'երեւայ թէ 966ին երբ վախճանեցաւ «Տարօնոյ (եւ Սասնոյ) իշխանն Աշոտ, «որդին Գրիգորի», ինչպէս կ'անուանեն զինքը արար պատմիչները, եւ «Տարօնոյ (անշուշտ միաժամանակ Մասնոյ) Հոռոմք տիրեցին» (Ասողիկ 183), իշխանութեան գլուխ կարգուեցաւ Ապուղամբի Թոռը, Թոռնիկի որդին, Մուշեղ (կամ անոր յաճախեալ անձանքը հայրը):

Մուշեղ իւր հօրը անուամբ — ըստ ընկալելալ սովորութեան — կ'անուանէ իւր որդին՝

ԹՈՒՆԻԿ Ա.

Կը զրէ Մ. Ուռայեցի (130—131) թէ 1056ին, գարնան Պարսից զօրքը կ'արշաւէ «ի գաւառն Տարօնոյ եւ բռնակալեալ առ ստորոտ լերամբն Տաւրոսի մերձ ի Սասուն: Եւ լուեալ զայս իշխանին Հայոց՝ զօրաւորն եւ քաջ որդին Մուշեղայ Թոռնիկ... հասանէր ի վերայ զօրացն այլազգեաց»: Կը պատմէ Ուռայեցի զարձեալ թէ 1072ին Փիլաոտոս «յղարկեաց եւ կոչեաց զքանն Թոռնիկ, զտէրն Սասնոյ, զալ նմա ի հնազանդութիւն»: Թոռնիկ աներկիւղ կը մերժէ այս առաջարկը: «Յայնժամ կոչեաց Փիլաոտոս զտէր Գրիգորիս (կաթողիկոս) եւ ասէ ցնա, եթէ Գրիգորիս քիչ թոռնիկն, զնա՛ եւ կոչեա՛ զնա ինձ ի հնազանդութիւն»: Բայց ապարդիւն կը մնայ այս միջնորդութիւնը: Ալիշուա զաշտին վրայ տեղի կ'ունենայ ճակատամարտ մը. Թոռնիկ կը զարնէ Փիլաոտոսի բանակն եւ մինչեւ Խարբերդ փախստական կը վարէ: Այս յազմութիւնէն քիչ յետոյ կը սպանուի Թոռնիկ զարանակալ զինուորէ մը (Մ. Ուռայեցի, 206—209):

Գրիգոր Մաղխարոս (+ 1058) զրած է առ Թոռնիկ «Մամիկոնեան իշխան» չորս թուղթ (ՀԴ—ՀԷ):

⁵ Հայապատմութիւն, § 293: ⁶ Südarmerien, 528:

ՉՈՐՏՈՒԱՆԵՒԼ ԵՒ ՎԱՍԱԿ

Թոռնիկ յետ մահուան թողուց երկու որդի «Չորտուանէլն եւ Վասակ, ի տղայական հասակի» (Մ. Ուռայեցի, 210): Մասնոյ դահին վրայ նստաւ Չորտուանէլ: 1101ին կը յիշէ զինքը Պողոս Տարօնեցի իւր առ Թէոփիստէ թղթին մէջ այսպէս. «Ով պատուական անուն Թէոփիստէ... զթուղթս զոր գրեցէք, ընկալելալ ընթերցայ եւ հասու եղէ ամենայն գրեւորոցս, որ է ի նամակի աստ, զոր առաքեցիք յառաջնմէ եւ բերաւ առ իշխանն Հայոց Սասնու առ նուլէրսիմոսս (իմա՛ νοβιλισσισμος = nobilissimus) Չարտուանէլս, որդւոյ Թոռնիկայ (Չ. որ յաթոռն կայ). եւ ի նոյնժամայն առ մեղ հասուցին զդերս քո յամսեանն Օդոստոսի է. եւ ի թուականութեանս Հայոց ԾԾ (1101). եւ բերաւ ի վանքս Ղաղարու⁷»:

ՎԻԳԻՆ

Ակնայ Ս. Գէորգ եկեղեցւոյ «Սասունցի» կոչուած Աւետարանը օրինակուած է 1169ին «ի հայրապետութեանն տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի եւ ի տէրութեան Սասնոյ Վիգենոյ մեծի պատուելի սիմոսի (νοβιλισσισμος) որդւոյ Չորտուանէլի Թոռ(ի)ն Թոռնիկայ մեծի հօրի եւ քաջի, որ բնիկ յԱստուծոյ հաստատուն հիմնակառուցեալ ունի զաթոռ հայրենի տէրութեան իւրոյ», եւ ի թուականութեանս Հայոց ի ՈԺԸ (1169) հրամանաւ երանելի եւ զբխատոսասէր թագուհւոյ Մէլէքուիթոյ ամուսնոյ Վիգենայ, որ է յազգէ Արծրունի եւ ի շառաւիղէ սրբոյն Վարդանայ զստեր մեծ իշխանին Մովսէս Հմայեկի⁸»:

Վիգենի օրով Սասունը զբաւելու փորձ կ'ընէ Շահ-Արմէն: Բայց Վիգէն «կալեալ տանի զնա յամուրս իւր. եւ զինի աւուրց արձակէ ուխտիւ եւ երգմամբ սիրոյ»: Շահ-Արմէն սակայն հակառակ տուած ուխտին եւ երգման «էստ զԱմուկ ի Սեղենիկայ եւ զՍասունք ի Վիգենայ ամենայն վանորէիք. եւ պահէր ի խոր խաղաղութեան զամս վաթսուն⁹»: Այս կը պատահի 1173/74ին. Միքայէլ Անտրի կը զրէ. «Ի սոյն ամի բերդեր, զոր ունէին Հայք յերկիրն Սասնոց, նեղեալ ի Մովսէսիկայ ամբարայէն՝ տուին ի Շահ-Արմէն, յամբարայն Խլաթայ, զայն որ ունէին ի հին ժամանակայ¹⁰»:

⁷ Ձեռ. էջմ. 840: ⁸ Թորոս Աղբար., Բ., 308—309: ⁹ Վարդան, էջ 124: ¹⁰ Միք. Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 476: Ասորի բնագրին թարգմանութիւնն է. Les Arméniens occupaient des forteresses dans la

ՉՈՐՏՈՒԱՆԵՒԼ Բ.

Վիգէն կ'ունենայ «ուստերս լուսածաղիկս եւ դատերս գեղեցկատեսիլս... ապա ոմանք ի դաւակաց սոցա յառաջագոյն փոխեցան յաստեացս ի հանդերձեալսն... յորոց մինն Գրիգորիոս ճանաչիւր...»: Կենդանի որդիներէն կը յիշէ յիշատակազիրը «գերեցեալանեան եւ զամենազովելին ասեմ զՉորտուանէլն, զգեղեցիկն, զբարետեսիլն, զզանգրահերն, զխարտիչազեղն, զլայնաթիկունքն, զհաստաբազուկն, զչափահասակն, զքրիստոսասէրն, զպօթասէրն, զքահանայասէրն, զխոնարհամիտն»:

Ծնողքը «փեսայացուցանեն զնա ընդ դուստր Վասիլ եղբոր տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, հօրի եւ մեծի, որոյ անուն Վանինէ ճանաչի...: Ծնանին երկու որդիս... որում առաջնոյն ասի Վասիլ. իսկ երկրորդին Շահիւնշահ. եւ երրորդին՝ Թոռնիկ:

Չորտուանէլ 1165, Մարտ 20ին կը վախճանի եւ կը թաղուի յուխտին որ կոչի Վանդեր, ի դուռն Ս. Կաթողիկէին, զոր շինեաց իւր երանելի հայրն Վիգէն»:

Կ'ըսուի թէ «էր ապա դուստր մի իւրեանց կոյս գեղեցիկ յոյժ, ... որոյ անուն յորջորջեալ կոչի Կատա... զնա կամեցեալ ծնողացն իւրոց տալ մեծաշուք պատուով ի թագուհու թիւն Շահինշահի որդւոյ Գրիգորի Թոռին Կատակալոսի, որդւոյ Կամենի մեծի ի Գեղաց գաւառ ի մեծ ամբոցն որ կոչի Սաղուկ: Որ իրբեւ երթեալ անդ... ծնեալ մանուկ մի գեղեցկատեսիլ, որոյ անուն է Շահմէլիք...»: Կատա կը վախճանի 1166ին տղարեքի ժամանակ, երբ աշխարհ կը բերէր երկուորեակներ:

ՎԱՍԻԼ, ՇԱՀՆՇԱՀ, ԹՈՒՆԻԿ Բ.

Կը զրէ Վարդան պատմիչ (133) թէ 1185ին կը մեռնի Շահ-Արմէն. «եւ զի թոռն Վիգենայ Շահնշահ քեռորդի տեառն Գրիգորի կաթողիկոսի առնթեր կայր մահուան Շահին, տեալ զիւրսն անկանի ի Սասունս. եւ անդ անկաւ ի ձեռս նորա Բէկղամուրն՝ որ էր ի խան ամենայն տան շահին. առնու ի նմանէ գրեթէ որ Թառնեան կոչի, եւ ուխտիւ ար-

montagne de Sassoun depuis de nombreuses générations; en cette année, les Turcs s'en emparèrent; l'émir de Maipharaqat, en effet, leur fit la guerre; il les pressa, et, réduits à l'extrémité par la famine, ils livrèrent eux-mêmes les places fortes au Sah-Armen, seigneur de Khelat (այն է Սորման Բ. Նապր էդ-Գին Մուհամմէդ, 1128—1185), էջ 361 ed. Chabot.

ճակեաց զնա. որ եւ ստեաց ուխտին ի տիրելն իւրում աթոռոյ Շահին. եւ զայն եւս եւ զամենայն Սասունք եհան ի նմանէ. եւ արկընդ հարկաւ գեղեցիցիս եւ զուխտս»: Վարդան, 133:

Այս միջոցին Շահնշահ եւ եղբարք անցան Կիլիկիա:

Մասնոյ Թոռնիկեանք թէ ինչ բախտի հանդիպեցան ի Կիլիկիա, կը բացատրեն հետեւալ տողեր, որոնք Հ. Ղ. Ալիշանի կը պատկանին (Սիսուան, 441).

«Աղնուազոյնք յազատորդիս Հայոց ժամանակին, որք եւ յարքունիս իսկ Լեւոնի կային յայնժամ, էին եղբարք երկու, Հեթում¹¹ եւ Շահնշահ, որդիք Չորտուանէլի մեծատոհմ իշխանի Սասնոյ, եւ քեռ կաթողիկոսին Հայոց (Գր. Տղայոյ). որ է ասել, մայրենեօք Պահաւորունի, տոհմ մեծահարկի յետ Բաղրատունեացն. եւ էին երկօքին եւս «արք բարեանք սիլք», ըստ պատմիչն. որոց անդրանկանն՝ սիլք», ըստ պատմիչն. որոց անդրանկանն՝ կաթողիկոսի Շահնշահի՝ եւ ի կառուած զՍելեւկիայ վիճակն, խոստամբ որպէս թուի՝ Փիլիպպիւսեայ, զի գեռարուսիկ էր սա, եւ սնանէր առ հանույ իւրում Ռիթայ (մօր Լեւոնի): Յետ ամաց լով վեցից, այն է յամի 1193, ի միում ամսեան ժամանակի՝ յորում վախճանեալ էր կաթողիկոսն Գր. Տղայ (ի 16 մայիսի), մեռան եւ երկօքին սոքա եղբարք, ոչ յայտնի ինչ բոհօրէն մահուամբ. այլ զի զուգաժամանակ եղեւ կատարած երեցուն եւս արեւակցացն, եւ զի՛ թուի իմն թէ իսկ ինչ դոյր ընդ նոսա եւ ընդ Լեւոն, զոր ոչ յայտնեաց պատմութիւն, համարեցաւ յոմանց, ըստ համարոտ ժամանակագրի, թէ «Լեւոն եղեւ պատճառ մահուան նոցա». յոր կարծիս անկեալ երեւի եւ ինքն զորդն, թէ պէտ եւ ըստ արեւելեան սովորեալ ոճոյ յաւելուցու «այլ ճամբարիսն Աստուծոյ է գիտելի...»: Եթէ հարսնացեալ էր Փիլիպպիւսեայ ի Շահնշահ եւ եթէ ոչ՝ այն չէ յայտ, բայց այս՝ զի երկօքին եւս քորքն այրիացեալք էին, որպէս թուի, մինչ չեւ ի կատարեալ չափ ամուսնութեան հասեալ:

«Երէցն Ալիժ — որ 1193ին հաղու 12ամեայ էր — յերկրորդում ամին (1194) տուաւ ի կնութիւն Ռեմունդի, անդրանկան եւ ժա-

¹¹ Հեթում, որ Շահնշահի երէց եղբայրն կ'ըսուի, պէտք է նոյնացնել Վասիլի հետ. Մարկուարտ (Südarmerien) կը համարի թէ Թոռնիկն ըլլայ:

ոանդի Բրնձին Անտիոքայ... և ծնալ զԹու-
բէն բրինձ... :

«Փիլիպպինէ տուաւ ի կնութիւն թէո-
զորի Ա. Լասկարեսայ կայսեր» († 1222). ասկէ
ծնալ զվարձանքի կնոստանդին. ապա զժամե-
լով կնոջ հետ «զարձոյց զնա ի Հայո» (1212°) :

Թոռնիկեանց մասին անդրազոյն տեղե-
կութիւններ կը պակսին :

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՄՈՂՍԷՍ Գ. ՏԵԹԵՒԵՅԻ ԿԵԹՈՂԻԿՈՍ

ԿԵՆՆԻՆ ԵՒ ԳՈՐԺՈՒՆԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՀՈՒԱՆ 300ԱՄԵԱՅ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

20. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՌՈՄԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ
ՀԵՏ

Կաթողիկոսական աթոռին էջմիածին վե-
րահաստատուելէն ետքը, առաջին անգամ
Սարմատեցի Ստեփանոս կաթողիկոսն (1543—
1551) եղաւ, որ յարարելութեան մէջ մտաւ
Հոռոմայ Քահանայապետին հետ: Իր նպա-
տակն էր միջնորդութեամբ վատիկանի շար-
ժել եւրոպական պետութիւնները, նիւթա-
կան, բարոյական եւ զինուորական ուժերով
օղնելու Հայոց, որպէս զի կարենան թօթափել
պարսկական ծանր լուծն եւ ձեռք բերել քա-
ղաքական ազատութիւն: Առ այս կարեւոր
համարեցաւ կաթողիկոսը, նաեւ անձամբ ներ-
կայանալ Հոռոմայ Քահանայապետին եւ Եւրո-
պական իշխանութիւններու: Գծբխտաբար
ի գերեւ ելան մշակուած այս բոլոր ծրագիր-
ները, որովհետեւ Ստեփանոս Սարմատեցի
կէս ճանապարհին վախճանեցաւ ի Լեմբերգ
(Լիով) 1551ին: Իր յաջորդն Միքայէլ Աբրա-
տացի († 1574) կը շարունակէ պահպանել յա-
րարելութիւնները Ս. Աթոռին հետ. Աբգար
զպրի առաքելութիւնն ի Հոռոմ նոյն քաղաքա-
կան նպատակները կը հետապնդէր: Թէպէտ
գրական որ եւ է արդիւնք շատին այս բա-
նակցութիւնները, բայց եւ այնպէս թաղէոս
կաթողիկոս (1583) ապրեցաւ Արեւմուտքի
հետ թղթակցութեան մէջ: Իսկ ի Հոռոմ կ'որո-

րուէր նոյն խորհուրդներով Աբգար զպրի որ-
դին Սուրբանշահ-Մարկանդոնիոյ († 1585) ¹ :

Այնուհետեւ, երբ մանաւանդ Օսմանեանց
եւ Պարսից մէջ թշնամութիւնները ծայր առին
եւ Արեւմուտք Օսմանեան բանակը յաղթական
կը յառաջանար, աննպատակ տեսնուեցաւ ա-
զատութեան յոյսերով տարուբերուել: 1579ին
Երեւան ինկած էր Օսմանեանց ձեռքը:

Այսպէս, թէպէտ ապարդիւն մնացին ա-
զատութեան ամէն փորձերը, բայց չկարե-
ցաւ այն յոյսը, թէ Արեւմուտքէն պիտի ծագի
փրկութիւնը:

Օսմանեան տիրապետութեան տակ, բայց
յատկապէս ապստամբ բանակի արձակեցաւ ա-
նակ իշխանութեան օրերուն, աւելի անտանելի
դարձած էր կեանքը արեւելեան դաւառ-
ներու մէջ: Տանջուած, հարստահարուած,
խիստ հարկապահանջութեանէ յուսահատու-
թեան մատնուած ժողովուրդը կը փնտէր
օգնական բարեկամի մը ձեռքը: Միակ ապա-
ւէնն էր քրիստոնէայ տարրին համար Հոռոմայ
Եկեղեցւոյն Հովուապետը, որուն անունը
հռչակուած էր Արեւելք եւ կը վստելէր Արեւ-
մուտք բարձր ճոխութիւն:

Հոռոմի Քահանայապետները իբրեւ հո-
վուապետ կաթողիկէ Եկեղեցւոյ ունէին իրենց
աղբեցութեան տակ ոչ միայն քահանայապե-
տական պետութեան սահմանները, այլ եւ
լուսնոյն կաթողիկէ աշխարհը: Եւրոպական
պետութիւնները կը հետեւէին անոնց ակնար-
կութիւններուն, երբ մասնաւորապէս կաթո-
ղիկէ Եկեղեցւոյ շահերը համադրեցաւ հո-
վուապետի կողմէն: Այս պատճառաւ ալ երբ
առիթ ընծայուէր արեւելեաց զիմել կաթո-
ղիկէ Եկեղեցւոյ Հովուապետին՝ հայցելու
քաղաքական կամ բարոյական օգնութիւն եւ
պաշտպանութիւն, ուղղակի իրմէ կամ անոր
միջնորդութեամբ պետութիւններէ, առաջին
հարցումը կ'ըլլար, թէ ի՞նչպէս է անոնց վե-
րաբերմունքը հանդէպ կաթողիկէ Եկեղեցւոյ:
Արեւելեան քրիստոնէայը կը դաժնուէին տա-
կաւին կաթողիկէ Միութեանէն դուրս: Հոռոմի
մեծազոյն փափազն եղած էր միշտ Միութեան
մէջ ունենալ արեւելեան Եկեղեցիներն ալ:
Առ այս սկսեալ ժ. Գ. դարէն, բայց յատկապէս
ժ. Զ. — ժ. Է. դարերուն հիմնարկուած էին նոր
վանական հաստատութիւններ, որոնք իրենց
առաքելակները կ'ուղարկէին առաջաւոր եւ հե-

¹ Այս խորհրդներու մասին տե՛ս իմ գրութիւնս՝
Ազատութեան շարժումը ժ. Ե. — ժ. Զ. դարուն Հայոց մէջ.
Հայ գէոգր. 1917/18, էջ 142—154:

աւար Արեւելք, մէկ կողմէն չմիացեալ Եկե-
ղեցիները ի միութիւն յորդորելու, միւս կող-
մէն հեթանոս ժողովուրդներու մէջ քրիստո-
նէութիւնը քարոզելու: Գրիգոր Ժ. Գ. Քահա-
նայապետ հարկ տեսաւ 1623ին հաստատել
Տարածման Հաւատոյ Ս. Ժողովը, որուն մաս-
նաւոր խնամքին յանձնուեցաւ այնուհետեւ
Եկեղեցիներու միութեան հոգը:

Պարսկաստանի մէջ կը դորձէին ժ. Է. դա-
րու սկիզբը Աւգոստինեանք, Բոկոսն Կարմե-
ղեանք եւ Կապուչինք, որոնք սերտ յարաբե-
րութեան մէջ կ'ապրէին Հայոց հետ:

Հայոց Հոռոմի Եկեղեցւոյ հետ Միութեան
հարցը լուրջ խորհրդածութեան առարկայ
եղած էր արդէն Փրոքեմեան ժողովի մէջ
(1439): Հայոց կաթողիկոսի պատգամաւոր-
ները ունեցած էին բանակցութիւն Եւզինիոս
Գ. ի հետ եւ կնքած Համաձայնութեան սահ-
մանադրութիւն մը: Այս Համաձայնագիրը
այնուհետեւ յաճախ կը ներկայացուէր Հայոց,
ամէն անգամ որ խօսք կ'ըլլար Միութեան
մասին:

Միութեան հարցը նոր բանակցութեանց
առարկայ եղաւ մասնաւորապէս ժ. Զ. դարու
վերջին եւ ժ. Է. դարու առաջին կէսին: 1585ին
Միգոնի արքեպիսկոպոսը անձամբ ներկայա-
ցած էր Սիւս, բանակցելու Ազարիա կաթողի-
կոսին հետ ²: Ժ. Է. դարու սկիզբը Միութեան
խնդրով ուղևորուած էին Յովհաննէս Խուլ եւ
Զաքարիա Վանցի, Կ. Պոլսոյ պատրիարք-
ները: 1624 Դեկտ. 10ին Տարածման Հաւա-
տոյ Ս. Ժողովը նոյն հարցով դիմած էր Երու-
սաղէմի Հայոց Գրիգոր Պարոնտէր պատրիար-
քին ³: Բարեկամական յարաբերութեան մէջ
էր Հոռոմի հետ Տիգրանակերտի արքեպիսկո-
պոսը Յովհաննէս Ուռուսյեցի: Այս շարժման
դէմ կանգնեցաւ Գրիգոր Կեսարացի, Կ. Պոլ-
սոյ պատրիարքը († 1635):

Որչափ ալ պանագան էին տրամադրու-
թիւնները աղբայնոց քով, բայց եւ այնպէս
Ազգին քաղաքական եւ անտեսական պայման-
ները կը ստիպէին Ազգին առաջնորդները ու-
նենալ Արեւմուտքի հետ բարեկամական կապ:
Մասնաւորապէս Արեւմուտքի հետ ստեւծա-
կան յարաբերութեան մէջ ապրող հայ վաճա-

² Հմմտ. Հ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթո-
ղիկէ վարդապետութեան ի Հայո. Վիեննա 1878, էջ
159—160 եւ 302—313:

³ Propaganda, Lettere volgari della S. Congrega-
zione, vol. 3, f. 206. Հմմտ. եւ G. Hofmann, Grie-
chische Patriarchen und römische Päpste. Roma
1933, S. 8—9. Orientalia Christiana, vol. 30, 1,
(1933).

աւանները — յանուանէ Զուղայեցիները,
որոնք անհրաժեշտ կը տեսնէին արեւելեան եւ
արեւմտեան նաւահանգիստներու մէջ յենա-
րաններ ունենալ քահանայապետական հովա-
նաւորութեան տակ:

Ինչպէս կ'երեւայ, անոնց դրդումներու
վրայ դիմեց Մեղիսեղեկ կաթողիկոս 1602ին
Կղեմէս Բ. Քահանայապետին, խնդրելու ա-
նոր պաշտպանութիւնը ի նպաստ հայ ժողո-
վրդեան եւ վաճառականներու: Թղթատարն է
Յովհաննէս Ղոփուզեցի, Տերղնոյ եպիսկո-
պոսը. սա, որ յայտնի անձնաւորութիւն մըն
էր Հոռոմ, կ'երեւայ թէ ուղևորած էր Երե-
ւան-Զուղայ. եւ հոն ծանօթացած Կաթողի-
կոսին: Մեղիսեղեկի թուղթը չունիմ առ
ձեռն. անոր բովանդակութեան ամփոփումը
տուած է Կղեմէս Բ. իւր առ Փիլիպպոս թա-
ղաւորն Սպանիոյ գրած հետեւեալ գրութեան
մէջ, զոր թարգմանաբար կը ներկայացնեմ:

Թովղթ. ԿՂԵՄԵՍ Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌ ՓԻԼԻՊՊՈՍ
ԹԱԳԱՌՈՐՆ ՍՊԱՆԻԱՅ
(վատիկանեան Դիւան, Acta. ԽԳ, հատոր 46, Թ. 281,
էջ 264:)

Մերելի որդւոյ մերում ի Քրիստոս փի-
լիպպեայ կաթողիկեայ թաղաւորին Սպա-
նիացւոյ Կղեմէս Բ. Քահանայապետ:

Մերելի որդի մեր ի Քրիստոս, ողջոյն եւ
առաքելական օրհնութիւն:

Յովհաննէս Ղոփուզեցի, մեծարեալ ար-
քեպիսկոպոսն Տերղնոյ Հայոց, որ ղթուղթս
մեր զայս կաթողիկէ Մեծութեան Զերում ա-
ռաջի առնէ, յառաջ քան դաւուրս ինչ եկն ի
սուրբ սեւածա գլխոյն առաքելոց, առաքեալ առ
մեզ ի մեծարոյ եղբօրէ Մեղիսեղեկէ՝ ի զլիսա-
ւոր առաջնորդէ Հայոց, որ կաթողիկոսն եւ
հոյրապետ անուանեալ յորձորջի. զորոյ
ղթուղթն ընկալաք գառաքեալն ի ձեռն նորին
Յովհաննու: Ի թղթիս յայտնիկ ճանաչէ նոյն
Մեղիսեղեկ զբարձրագոյն իշխանութիւն այսր
որոյ առաքելական Աթոռոյ, յորում մենք
բաղմիմք դահերէց առանց արժանեաց. եւ
խոստանայ զնորին մեծութեան եւ ճոխութեան
երթալ զհետ:

Ի նոյն յարեալ պատմէ մի ըստ միջնէ եւ
զմիտական հանգամանոց եւ զբաղմաղթի
տառապանաց այնր բովանդակ ժողովրդեան,
որ ընդ երկաթեղէն լծով անհնարին բռնու-
թեան Թուրքաց հարստահարի եւ ի դառնա-
գոյն կապանս անկեալ հեծէ:
Խնդրէ արդ ի մէջն աղերսանօք եւ յիւր